ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2024-25 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2024-25 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 2 պայմանագրեր.

1. Տոկիոյի գյուղատնտեսության և տեխնոլոգիայի համալսարան (Ճապոնիա)
2. Կալիֆորնիայի պետական համալսարան (ԱՄՆ)

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2024-25 թթ. Էրազմուս+ ՀԳ1-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 62 պայմանագրեր (որից նոր՝ 13 պայմանագրեր, իսկ 49-ը՝ նախորդ տարիներից), և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 44 համալսարանների հետ:

2024-25 թթ. ՀԱԱՀ-ն իրականացրեց արտագնա 52 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական տարբեր համալսարաններում (որից 1 ոչ համալսարանական), 15 արտագնա սովորողների դասընթացներ և պրակտիկաներ և ընդունեց 24 աշխատակիցների:

Հաշվետու տարում ՀԱԱՀ-ն Էրազմուս+ ծրագրով առաջին անգամ սկսել է համագործակցել նաև Չեխիայի, Թուրքիայի ինչպես նաև մի քանի նոր համալսարանների հետ:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		**Ներգնա**	
	Հաստատություն	ուսանող	աշխա-տակից	ուսանող	աշխա-տակից
1.	Անգել-Կանչևի համալսարան, Բուլղարիա		5		5
2.	Պլովդիվի համալսարն, Բուլղարիա				1
3.	Յագիելոնյան համալսարան, Լեհաստան		1		

4.	Ավստրիայի բն. գիտ. և կենսագիտ. համալսարան, Ավստրիա	2	6		
5.	Մալթայի մշակույթի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ, Մալթա		2		
6.	Մարկեի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա	3	2		3
7.	Գազենհայմի համալսարան, Գերմանիա	1			
8.	Կրակովի գյուղատնտեսական համալսարան, Լեհաստան				1
9.	Վիզեուի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա		3		
10.	Պորտոյի համալսարան, Պորտուգալիա		2		1
11.	Ավեիրոյի համալսարան, Պորտուգալիա		1		
12.	Էվորայի համալսարան, Պորտուգալիա		1		
13.	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա		4		
14.	Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարան, Պորտուգալիա		1		
15.	Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	1	2		
16.	Կաստելո Բրանկոյի պոլիտեխնիկական ինստիտուտ	1			1
17.	Պանթեոնի հասարակագիտական և քաղաքագիտական համալսարան, Հունաստան		4		
18.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	4	3	2	3
19.	Պիրեուսի համալսարան, Հունաստան		2		
20.	Սալոնիկի Արիստոտելի համալսարան, Հունաստան		2		
21.	Թրակիայի Դեմոկրիտուսի համալսարան, Հունաստան		2		1
22.	Մակեդոնիայի համալսարան, Հունաստան		1		
23.	Վալյադոլիդի համալսարան, Իսպանիա		1		

24.	Ալմերիայի համալսարան, Իսպանիա		4		
25.	Կրետերի համալսարան, Հունաստան				1
26.	Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Ռումինիա	2	1		3
27.	Սապիենցա համալսարան, Իտալիա				1
28.	Բուրսայի Համալսարան, Թուրքիա				1
29.	Տրոմսոյի Արկտիկական համալսարան	1			
30.	Վիտաուտաս Մագնուսի համալսարան՝		1		
31.	Դուբրովնիկի համալսարան, Խորվաթիա				4 (Էրազմուս + ՀԳ 131)
32.	Տալասայի երիտասարդական ասոցիացիա (ոչ համալսարանական)		1		
	Ընդամենը	**15**	**52**	**2**	**26**



Վերջին տարիներին ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների նվազում: Այսպես, 2024-25 թթ.-ին աշխատակիցներ և ուսանողների համար հայտարարված բազմաթիվ մրցութային տեղեր թափուր մնացին (Վալենսիայի համալսարան, ուսում-3; Բրագանսայի համալսարան, ուսում–2; Բուրսայի համալսարան, վերապատրաստում-2; Պորտոյի համալսարան, ուսում; Կլուժ Նապոկայի համալսարան,

ուսում-1; Գրանադայի համալսարան, հետազոտական աշխատանք-1; Թրակիայի Դեմոկրիտուս համալսարան, միջազգային շաբաթ-2; Մինհոյի համալսարան, Ավեյրոյի համալսարան, Էվորայի համալսարան, ուսում; Վալադոլիդի համալսարան, ուսում-1): Դրանք վերաբերում են ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետներին:

Միևնույն ժամանակ արձանագրվում է անգլերենին տիրապետող աշխատակիցների թվի զգալի նվազում, ինչը խիստ բացասական ազդեցություն է ունենում միջազգային շարժունության գործընթացների վրա: ՄԿԴ-ը հետևողական ջանքեր է գործադրում հնարավորություն ընձեռելու այն աշխատակիցներին, ովքեր կամ նախկինում չեն մասնակցել շարժունությանը, կամ երկար դադարից հետո կրկին ցուցաբերում են հետաքրքրություն: Այնուամենայնիվ, անգլերենին տիրապետող աշխատակիցների լուրջ պակասի պատճառով ՄԿԴ-ն հաճախ կանգնում է դժվար որոշումների առջև: Մասնավորապես՝ ընտրող հանձնաժողովը հարկադրված է լինում նույն տարում երկրորդ անգամ երաշխավորել արդեն իսկ շարժունության մասնակցած աշխատակցի թեկնածությունը, ինչը համարվում է հարկադրական և ոչ ցանկալի մոտեցում: Այս քայլը, չնայած իր հակասական բնույթին, դառնում է անհրաժեշտ՝ կանխելու եվրոպական գործընկեր համալսարանների հետ համագործակցության հնարավոր դադարեցումը: Միջազգային շարժունության ծրագրերի շարունակականությունը պահելու համար ՄԿԴ-ն ստիպված է ապահովել թեկնածուների նվազագույն անհրաժեշտ հոսք: Տվյալ խնդիրը հատկապես սրվեց այս տարում, երբ առաջին անգամ 2016 թվականից ի վեր արձանագրվեց շարժունության թվաքանակի նվազում: Այս փաստը ՄԿԴ-ի կողմից դիտարկվում է որպես մտահոգիչ միտում:

Նվազման պատճառը միջազգային ծրագրերի կամ ֆինանսավորման բացակայությունը չէ, այլ հիմնականում պայմանավորված է անգլերենին բավարար մակարդակով չտիրապետող աշխատակիցների և ուսանողների թվի կտրուկ նվազմամբ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

AFISHE Էրազմուս+ ՀԳ2

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել են ուսումնառության նյութերը, իրականացվել է դասախոսների վերապատրաստում լաբորատոր սարքերով աշխատելու ուղղությամբ, տեղի են ունեցել երկու նախագծային հանդիպումներ Պորտոյի և

Դոբրովնիկի համալսարաններում: 2024 թ.-ի սեպտեմբերից երկու մագիստրանտներ սկսել են սովորել նորաստեղծ կրթական ծրագրով:

T-GREEN Էրազմուս+ ՀԳ2

Նախագծի շրջանակում ավարտվել են առաջին երեք աշխատանքային փաթեթների աշխատանքները, իսկ 2025 թ. հուլիսին նախատեսվում է ավարտել չորրորդ փաթեթը: Նախագծի կոնսորցիումի անդամ ԲԿԳԿ-ում քննարկվել է մագիստրոսական համապատասխան կրթական ծրագրերը ներդնելու առաջարկը: Դրանք ներառվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647-Ա/Ք հրամանի N2 հավելվածում՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի փետրվարի 12-ի N500-Ա/2 հրամանի: «Կանաչ տնտեսության ռազմավարական կառավարում» և «Կայուն քաղաքներ և կանաչ տեխնոլոգիաներ» ՀԱԱՀ-ի առաջարկած նոր կրթական ծրագրերը ներառվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի N 647-Ա/Ք հրամանի N2 հավելվածում: Կրթական ծրագրերի լիցենզավորման փաթեթները արդեն պատրաստ են ներկայացվելու համապատասխան մարմիններին:

VETfarm Էրազմուս+ ՀԳ2

Տեղի են ունեցել ծրագրի մեկնարկի հանդիպումներ, հետագայում կառավարման ժողովներ և աշխատանքային հանդիպումներ՝ ընթացիկ հարցերի քննարկման նպատակով: Մշակվել են 7 նոր ուսումնական մոդուլներ՝ ՄԿՈՒ համակարգում ներդնելու նպատակով: Ֆերմերների համար կազմվել և թարգմանվել է հայերեն էլեկտրոնային ուղեցույց այգեգործության համար: Սույն թվականի մարտին Նիդերլանդներում, այնուհետև մայիսին Չեխիայի Հանրապետությունում, Հայաստանի գործընկերները վերապատրաստվել, ինչպես նաև մասնակցել են կառավարման աշխատաժողովներին: ՀԱԱՀ-ում իրականացվել են բաց դասեր ուսանողների և անձակազմի համար, որոնց մասնակցել են նաև ուսանողներ այլ ուսումնական հաստատություններից:

LISS24 Էրազմուս+ ՀԳ2

2024-2025 ուս տարվա ընթացքում տեղի են ունեցել ծրագրի համակարգող TURKU UAS գործընկերների կողմից կազմակերպված օնլայն քննարկումներ: Նոյեմբերին Իսպանիայում, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում տեղի է ունեցել WP4 քննարկմանը նվիրված հանդիպման և ուսանողների ներկայացրած նորարարական գաղափարների ցուցահանդես: 2025թ.-ի մարտին տեղ է ունեցել հանդիմում Վիեներ Նոյշտադտի կիրառական գիտությունների համալսարանում (Ավստրիա), որի նպատակն էր ծանոթանալ Sales Lab-երում կիրառվող սարքերին և ծրագրային փաթեթներին: Ապրիլին մեկնարկվել են նորարարական գաղափարների դասընթացները, որոնք ավարտվել են ներբուհական և միջբուհական մրցույթներով: Հունիսի 9-12 տեղի է ունեցել եվրոպական գործընկեր-համակարգողների և վրացի գործընկերների այցը Հայաստան որի ժամանակ քննարկվել են աշխատանքային փաթեթները, ՀԱԱՀ-ում անց է կացվել աշխատանքային սեմինար քննարկում Sales Lab-երի գործարկման խնդիրների, սարքերի կիրառման և հետագա ուսումնական և հետազոտական աշխատանքներում ընդգրկման համար: Ընթացքի մեջ է լաբորատորիայի համար անհրաժեշտ սարքերի գնման գործընթացը, իսկ սեպտեմբերին պլանավորվում է B2B վաճառքի դասընթացների կազմակերպում և մրցույթի իրականացում ուսանողների շրջանում:

Visegrad+ նախագիծ

Հարավային Բոհեմիայի համալսարանի կողմից համակարգվող «Փափուկ հմտությունների բարելավում 21-րդ դարի կարիերայի խորհրդատվությունում. V4 փորձի» փոխանցում նախագիծը սկսվեց 2024 թ.-ի սեպտեմբերին համակարգող համալսարանում կազմակերպված մեկնարկային հանդիպմամբ: Այդ ընթացքում իրականացվել են երեք դասախոսների վերապատրաստումներ երեք մոդուլներով, որոնք այնուհետ մշակել են «Ինքնաներկայացում», «Ինքակառավարում» և «Բարեկեցություն» մոդուլները: Այնուհետ, իրականացվել ՀԱԱՀ ուսանողնրեի վերապատրաստումներ վերոհիշյալ մոդուլներով: Միաժամանակ կատարվել է հարցում փափուկ հմտությունների և կարիերայի խորհրդատվության վերաբերյալ մասնակից համալսարանների ուսանողնրեի շրջանում, որի հիման վրա կազմվում է անգլիալեզու ձեռնարկ:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին

Հաշվետու տարում ՀԱԱՀ աշխատակիցները մասնակցել են տարատեսակ աշխատաժողովների, համաժողովների և գիտաժողովների տարբեր երկրներում:

Ծրագիր	**Վայր**	**Քանակ**
Visegrad ծրագրի շրջանակում ծրագրային հանդիպում	Հարավային Բոհեմիայի համալսարանում, Չեխիա	**2**
Հայաստանում օրգանական գյուղատնտեսության հզորացում (SOAA) ծրագրի շրջանակում ծրագրային հանդիպում	Կահիրեի ամերիկյան համալսարանում (Եգիպտոս)	**2**
EU4Diologue:Academic Cooperation Projects 2024-ի շրջանակում վերապատրաստում	Վրաստան	**1**
POLIRAN» կաթիլային ոռոգման համակարգերի արտադրության ընկերություն	Իրան	**1**
Գյուղատնտեսական ուսումնական հաստատություններ վերապատրաստում	Ֆրանսիա	**2**
Էրազմուս+ ՀԳ2 AFISHE ծրագրի շրջանակում ծրագրային հանդիպում	Պորտոյի համալսարան, Պորտուգալիա	**2**
Էրազմուս+ ՀԳ2 LISS24 ծրագրի շրջանակներում վերապատրաստում	Իսպանիա	3
Էրազմուս+ ՀԳ2 T-GREEN ծրագրի շրջանակներում վերապատրաստում	Միկոլաս Ռոմերիսի համալսարան, Լիտվա	3
Գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոն վերապատրաստում	Ուզբեկստան, Տաշքենդ	1
Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում աշխատաժողովի մասնակցություն	Լյուբլյանայի համալսարան, Սլովենիա	1
Էրազմուս+ ՀԳ2 LISS24 ծրագրի շրջանակում վերապատրաստում	Ավստրիա	3
Էրազմուս+ ՀԳ2 VetFarm ծրագրի շրջանակում վերապատրաստում	Նիդեռլանդներ	5

«Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում մասնակցություն աշխատաժողովին	Լյուբլյանայի համալսարան, Սլովենիա	1
«Գլոբալ զարգացման նախաձեռնություն» ծրագրի շրջանակում վերապատրաստում	Չինաստանի Սննդի և Խմորման Արդյունաբերության Ազգային Հետազոտական Ինստիտուտում ՍՊԸ	6
Էրազմուս+ ՀԳ2 AFISHE շրջանակում վերապատրաստում	Դուբրովնիկի համալսարան, Խորվաթիա	2
Էրազմուս+ ՀԳ2 VETFarm ծրագրի շրջանակում վերապատրաստում	Չեխիա	**5**
DAAD ծրագրի շրջանակում վերապատրաստում	Գայզենհայմի համալսարան, Գերմանիա	**1**

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2024-25 թթ. ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	**Քանակ**	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	15	52
Էրազմուս+ ՀԳ2		23
Այլ	1	20
Ընդամենը	**16**	**95**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային կապերի դեպարտամենտը (ՄԿԴ) առանցքային դեր ունի ՀԱԱՀ-ի միջազգայինացումն ապահովելու գործում: Այս վերլուծությունը նպատակ ունի գնահատել ՄԿԴ կատարողականը՝ հիմնվելով դրա հիմնական գործառույթների, արձանագրված արդյունքների, խնդիրների և բարելավման ուղղությունների վրա:

ՄԿԴ հիմնական գործառույթների շրջանակում ներառվում են միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի ստեղծումն ու կառավարումը, նոր գործընկերությունների հաստատումն ու առկա կապերի ամրապնդումը, շարժունության գործընթացների համակարգումը և մասնակիցների հետադարձ կապի հավաքագրումը՝ շարունակական բարելավման համար:

Մայիս ամսին ՄԿԴ-ն կազմակերպեց բուհի առաջին միջազգային շաբաթը՝ նվիրված ՀԱԱՀ-ի հիմնադրման 95-ամյակին: Միջոցառմանը մասնակցում էին համալսարանի նոր և երկարամյա եվրոպական գործընկերները՝ ներկայացնելով Եվրոպայի վեց բարձրագույն ուսումնական հաստատություններ:

ՄԿԴ-ն ակտիվորեն տարածում է տեղեկատվություն միջազգային հնարավորությունների (միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրեր) մասին՝ օգտագործելով ՀԱԱՀ պաշտոնական կայքը, սոցիալական մեդիան:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպվեցին 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ: Վերջիններս ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում հանդիպումներին՝ արտահայտելով իրենց հետաքրքրությունը: Քննարկումների ընթացքում ուսանողները նաև բարձրաձայնեցին օտար լեզվի չիմացության խնդիրը, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ միջազգային ծրագրերին մասնակցելու համար:

2024-2025 թթ. ընթացքում ՄԿԴ-ն հրապարակել է շուրջ 111 նյութ, այդ թվում՝ 42 Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթներ, 7 տեղեկատվական նյութ Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի վերաբերյալ, 29 հոդված շարժունության մասնակիցների լավագույն փորձի մասին, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

ՄԿԴ-ն ձեռնարկում է միջոցառումներ հետադարձ կապի ապահովման և որակի բարելավման նպատակով: Վերադարձից հետո շարժունության յուրաքանչյուր մասնակից լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրված առցանց հարցաթերթիկը: Այս հարցաշարը թույլ է տալիս ՄԿԴ-ին բացահայտել շարժունակության գործընթացի ուժեղ և թույլ կողմերը: Արդյունքները վերլուծելով՝ ՄԿԴ-ն կարողանում է մշակել քայլեր՝ վերացնելու ցանկացած թերություններ և բարելավելու ընդհանուր փորձը:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. **Օտար լեզուների իմացության բարձրացում** ուսանողների և աշխատակիցների շրջանում: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. **Շարժունության ծրագրերի ակադեմիական համակարգողների նշանակում.** Էրազմուս+-ի կամ այլ կրեդիտային շարժունության ծրագրերի առավել արդյունավետ կազմակերպման համար ամեն ֆակուլտետում պետք է լինեի գոնե մեկ ակադեմիական համակարգող: Սա ամենաթույլ կետերից մեկն է ՀԱԱՀ-ում, ինչի պատճառով ՄԿԴ-ն և հատկապես՝ թեկնածու ուսանողները, բախվում են անհարկի խոչընդտների: Որոշ ակադեմիական պատաստանատուներ դեռ չեն պատկերացնում շարժունության առանձնահատկությունն ու կրեդիտների փոխճանաչման հիմնական սկզբունքները:
3. **Միջազգային ծրագրերի համար դասախոսների կարողությունների հզորացում.** բարելավել դասախոսների կարողությունը միջազգային ծրագրերի համար առաջարկներ գրելու և ներկայացնելու համար: Սա շատ կարևոր է մասնագիտացված ծրագրերին դիմելու և համալիր ծրագրերի փաթեթներ ներկայացնելու համար:
4. **Օտար լեզուների դասընթացների բազայի ստեղծում.** ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա (course catalog) և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:
5. **Դասախոսների մասնակցության ճանաչման և պարգևատրման համակարգի մշակում.** Ստեղծել համակարգ՝ ճանաչելու և պարգևատրելու պրոֆեսորադասախոսական կազմի անդամներին, ովքեր ակտիվորեն մասնակցում և ներդրում են ունենում միջազգային ծրագրերում: Սա կարող է

խթանել դասախոսների ավելի մեծ ներգրավվածությունը և նվիրվածությունը այս նախաձեռնություններին:

S	W
• ՄԿԴ աշխատակիցների բարձր ներգրավվածություն և նախաձեռնողականություն • հետադարձ կապի ստացման մշակված համակարգ՝ առցանց հարցաթերթիկների միջոցով • տեղեկատվության լայն սպեկտր, ներառյալ Էրազմուս+ մրցույթները, միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրեր, մասնակիցների փորձը և այլ միջազգային հնարավորություններ • կայուն համագործակցություն և հաստատված գործընկերային հարաբերություններ մի շարք եվրոպական համալսարանների հետ	• սահմանափակ մասնակցություն միջազգային ծրագրերի հանդիպումներին, ինչը ցույց է տալիս ուսանողների թույլ հետաքրքրությունը • օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների քանակի նվազում • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • սեփական միջոցների անբավարարություն տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում • որոշ ակադեմիական պատասխանատուների շրջանում շարժունության և կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ գիտելիքների պակաս, որն առաջացնում է կազմակերպչական մարտահրավերներ
O	T
• ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• ուսանողների թվաքանակի պակասում, ինչը կարող է

• մասնագիտական անգլերենի ուսուցման ծրագրերի ներդրում և խթանում՝ միջազգային մասնակցությունը մեծացնելու նպատակով • ԲԿ մասին նոր (դեռ սևագիր) օրենքը	հանգեցնել որոշ ծրագրերի փակման • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • ՀՀ գտնվող դեսպանատների գերծանրաբեռնված վիճակ և վիզաների անհարկի մերժում, որի պատճառով դժվարանում է իրականացնել շարժունությունը • աշխարհաքաղաքական իրավիճակ